ԱԱԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության ԼՐԱՏՈՒ

Նոյեմբեր, 2019թ.

ԱԱԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության
ԼՐԱՏՈՒ

Ռեզիդենտուրայի ծրագիր

Հանդիպում Առողջապահության ազգային ինստիտուտում

Առողջապահության ազգային ինստիտուտում տեղի ունեցավ ռեզիդենտուրայի զարգացման և բարելավմանը նվիրված երկօրյա աշխատանքային քննարկում, որն իրականացվեց ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի նախաձեռնությամբ: Ներկա էին ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ **Լենա Նանուշյանը** և Առողջապահության ազգային ինստիտուտի տնօրեն **Ալեքսանդր Բալարչյանը**:

Կարևորելով ռեզիդենտուրայի զարգացման և բարելավման ծրագրի անհրաժեշտությունը, Լ. Նանուշյանը նշեց.

Նման ծրագրերը միտված են կրթական նոր նշաձող սահմանալուն: Քննարկումները հնարավորություն են տալիս առավել հստակ պատկերացում կազմել ռեզիդենտուրական կրթության անհրաժեշտության վերաբերյալ:

Առողջապահության ազգային ինստիտուտի տնօրեն Ա. Բալարչյանը մանրամասնեց.

Ժամանակի հրամայականը գիտակցելով, մենք շեշտադրում ենք խնդրի արդիականությունը՝ առողջապահական կրթությանը հարկավոր են առավել ճկուն և հագեցած ծրագրեր, որոնց ներդրումը հնարավորություն կտա ունենալ բանիմաց, աշխարհին համընթաց քայլող բժշկական հանրություն:

Շնորհակալություն եմ հայտնում արտերկրում աշխատող մեր գործընկերներին իրենց հաջողված փորձը փոխանցելու պատրաստակամության համար և անչափ կարևորում եմ նմանօրինակ հանդիպումները:

Երկօրյա աշխատանքային քննարկման նպատակն էր նպաստել ռեզիդենտուրայի ծրագրի զարգացմանը՝ օգտագործելով միջազգային լավագույն փորձը: Ծրագիրը բաղկացած էր ուսուցողական և ինտերակտիվ դասախոսությունների շարքից:

Աշխատանքային քննարկման շրջանակներում իրենց փորձը հայաստանցի գործընկերներին փոխանցելու էին եկել Նյու Յորքի Բասեթի առողջապահական ցանցի կանանց առողջության բաժանմունքի ղեկավար, պրոֆեսոր Սամուել Բադալիանը, Հանրային առողջապահության ղեկավար, Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի մանկական վիրաբույժ, դոցենտ Շանթ Շեխերդիմիանը, Քեմբրիջի Առողջապահական միության առաջնային խնամքի բարելավման բժշկական ղեկավար, Հարվարդի բժշկական դպրոցի դասախոս Լորկի Լիբարիդիանը, հանրային առողջապահության ղեկավար, առաջատար գինեկոլոգ Ելենա Սագայանը:

ԱԱԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության
ԼՐԱՏՈՒ

PX-Ը ՎԵԲ-ՀԱՐԹԱԿ Է ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Օրերս Երևանում էին PX տեղեկատու խմբի անդամները միջազգային 28-րդ հանդիպմանը մասնակցելու նպատակով: 12 երկրից ժամանած 40 մասնագետներ հավաքվել էին միմյանց հետ քննարկելու **PX-հարթակի** տարբեր գործիքների և ծրագրերի վերաբերյալ գիտելիքները, փորձի փոխանակում կատարելու, ապագա պլանների մասին խոսելու համար:

Հանդիպման կազմակերպիչը ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտն էր, որտեղ հաջողությամբ կիրառվում է PX գործիքը՝ առողջապահական վիճակագրական տվյալների հետ աշխատելիս:

Նշենք, որ ամբողջ աշխարհում արմատական նշանակություն ունեն էլեկտրոնային տվյալների բազանները, որոնք հեշտացնում են վիճակագրական տվյալների օգտագործումը: Եվ այդ նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտը ներդրել է PX գործիքների և ծրագրերի միջոցով մշակված էլեկտրոնային տվյալների բազան, որի ցուցանիշներն օգտագործվում են հանրային առողջապահական քաղաքականության մշակման գործընթացում:

Ինստիտուտի կայքում տեղադրված գործիքի օգնությամբ **http://109.75.36.126/PXWeb/pxweb/hy/** տվյալների երկու՝ Առողջապահական ֆինանսական ցուցանիշներ և Առողջապահական ցուցանիշներ բազաներից, կարելի է կատարել պահանջվող տվյալների ընտրություն՝ հետագա վերլուծության համար: Այսօր հանրային առողջապահության պատասխանատուները ոլորտի հետ կապված որոշումներն ընդունում են հենց այդ վերլուծությունների հիման վրա:

Ասա Արիենը (Շվեդիա) անդրադարձավ այն փաստին, որ PX -հավելվածը մշակվել է Շվեդիայի վիճակագրական վարչությունում՝ Հյուսիսային Եվրոպայի երկրների հետ համագործակցությամբ:

Այսինքն՝ PX-ը վեբ-հարթակ է, որը էլեկտրոնային տվյալների բազաներից տեղեկատվություն ստանալու հնարավորություն է ընձեռում՝ ըստ պահանջվող պարամետրերի: Տվյալները PX-ը կարող է արտահայտել աղյուսակների կամ գրաֆիկների տեսքով:

ԱԱԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության
ԼՐԱՏՈՒ

Վլադիմիր Յուրիի Կոգան

2019թ. նոյեմբերի 17-ին երկարատև հիվանդությունից հետո կյանքից հեռացավ Ն.Բ. Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, բժշկական գիտությունների թեկնածու Վլադիմիր Յուրիի Կոգանը:

Վլադիմիր Կոգանը ծնվել է 1936 թ. նոյեմբերի 29-ին Թբիլիսիում:

1963թ-ին ավարտել է Երևանի Բժշկական ինստիտուտի բուժպրոֆիլակտիկ ֆակուլտետը:

1965-66թթ. աշխատել է Հանրապետական մաշկավեներական դիսպանսերում, որպես բժիշկ:

1966-1969թթ. սովորել է ԽՍՀՄ ԲԳԱ Աշխատանքի հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիհ-ի ասպիրանտուրայում:

1969թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը:

1970թ-ին Վ.Կոգանին շնորհվել է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1964-1965թթ. աշխատել է Մաշկավեներական դիսպանսերում որպես գլխավոր բժիշկ:

1971-1973թ. նշանակվել է ՀՍՍՀ ԱՆ Ռադիոլոգիայի սեկտորի վարիչ:

1973-1987թթ. եղել է ՀՍՍՀ ԱՆ Հիգիենայի և պրոֆիվանդությունների գիհ-ի տնօրեն:

1987-2003թթ. եղել է ՀՀ ԱՆ Ն.Բ. Հակոբյանի անվան Ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիհ-ի տնօրեն:

2004թ-ին նշանակվել է «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի Հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների բաժանմունքի վարիչ:

2015-2017թթ. եղել է ՀՀ ԱՆ Ն.Բ. Հակոբյանի անվան Ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիհ-ի տնօրեն:

2017թ. դեկտեմբերին Վ.Կոգանը նշանակվել է ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվ. Առողջապահության ազգային ինստիտուտի Հիգիենայի դասընթացների և պարենային ապրանքների և ոչ պարենային ապրանքների անվտանգության գիտագործնական կենտրոնի գիտական ղեկավար:

Վ.Կոգանը եղել է ՀՀ ԱՆ մասնագիտական հիվանդությունների գծով գլխավոր մասնագետ: Բազմիցս մասնակցել է միջազգային, համամիութենական, հանրապետական համագումարներին, կոնֆերանսներին, գիտաժողովներին: Եղել է մի շարք մեթոդական ձեռնարկների, գիտական հոդվածների, 1 մենագրության, բազմաթիվ գյուտերի հեղինակ, թեկնածուական ատենախոսությունների ղեկավար: Իր աշխատանքային գործունեության ընթացքում եղել է աշխատանքային հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների հանձնաժողովների, բազմաթիվ գիտաբժշկական ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ:

Բժշկագիտության բնագավառում Վլադիմիր Կոգանի՝ որպես գիտնականի մասնագիտական ներդրումներն արժանացել են բարձր գնահատականների, պարգևատրվել է «Բժիշկներն ընդդեմ ահաբեկչության» համաշխարհային հասարակական շարժման շնորհակալագրով (Երուսաղեմ-Նյու Յորք):

2016թ-ին, ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, առողջապահության ոլորտում ներդրած նշանակալի ավանդի համար պարգևատրվել է Երևանի քաղաքապետի ոսկե մեդալով, ՀՀ Առողջապահության նախարարության պատվոգրով:

ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի ողջ կոլեկտիվը ցավակցում է Վ.Կոգանի հարազատներին:

ԱԱԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության
ԼՐԱՏՈՒ

ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐ. կիրառե՛լ պատշաճ

Նոյեմբերի 18-ից մեկնարկել է հակաբիոտիկների նկատմամբ կայունության դեմ պայքարի համաշխարհային շաբաթը՝ «Հակաբիոտիկներ. կիրառե՛լ պատշաճ» կարգախոսով:

Հակաբիոտիկները կարևոր և արժեքավոր ռեսուրս են, այդ պատճառով ընտրված կարգախոսն արտացոլում է հակաբիոտիկների պատշաճ, նպատակային և միայն բժշկի նշանակմամբ օգտագործումը: Հակաբիոտիկների նկատմամբ վարգացող կայունությունը գլոբալ խնդիր է, այն վերաբերվում է ողջ մարդկությանը և մեծ սպառնալիք է հանրային առողջապահության համար: Կայունությունը վարգանում է, երբ մանրէները փոխվում են այնքան, որ հակաբիոտիկներն այլևս որևէ ազդեցություն չեն ունենում:

ԱՀԿ-ն վաղուց ահազանգում է, որ հակաբիոտիկների նկատմամբ վարգացող կայունության խնդիրը պարզապես կանխատեսում չէ, այն դրսևորվում է աշխարհի յուրաքանչյուր տարածաշրջանում և կարող է բացասաբար ազդել բոլորի վրա՝ անկախ տարիքից, սեռից, բնակության վայրից: Միջազգային տվյալների համաձայն՝ դեղակայուն վարակիչ հիվանդություններից տարեկան մահանում է 700 000 մարդ: Ամբողջ աշխարհում արտադրված հակաբիոտիկների 50%-ից ավելին օգտագործվում է գյուղատնտեսության ոլորտում:

Հայաստանում այս ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ գործողություններ: 2015 թ-ին Կառավարության կողմից հաստատված «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարության» շրջանակներում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, հետազոտություններ, ստեղծվել է հակամանրէային դեղերի մշտադիտարկման ռեգիստր, մայրաքաղաքի 4 հիվանդանոցում կատարվել են հակաբիոտիկների նշանակման օրինաչափությունների ուսումնասիրություններ:

Ինչպես յուրաքանչյուր տարի, այս տարի ևս քարոզարշավի նպատակն է բարձրաձայնել, որ հակաբիոտիկների նկատմամբ կայունությունը համաշխարհային առողջապահության համար արդիական հիմնախնդիր է, բարձրացնել անհատների իրազեկությունը հակաբիոտիկների պատշաճ օգտագործման ուղղությամբ, ներգրավել առողջապահության և գյուղատնտեսության ոլորտի մասնագետներին՝ հակաբիոտիկների կայունության դեմ պայքարում, նպաստել մոտեցումների փոփոխմանը, ինչպես նաև փոխանցել այն տեղեկատվությունը, որ պարզ գործողությունները կարող են բերել մեծ փոփոխությունների: Եվրոպական տարածաշրջանի երկրներում իրականացված տնտեսական գնահատումը, կանխարգելիչ միջոցառումների իրականացումը նվազեցնում են թե՛ մահվան դեպքերը, թե՛ ֆինանսական ծախսը:

ԱՀԿ-ն կոչ է անում առողջապահության ոլորտի բոլոր մասնագետներին պայքարել հակաբիոտիկների նկատմամբ վարգացող կայունության դեմ՝ վարակի հսկողության և կանխարգելման պատշաճ միջոցառումների իրականացմամբ , ազգային մակարդակներում հակաբիոտիկների պատշաճ կիրառման ռազմավարությունների մշակմամբ և ներդրմամբ: Հակաբիոտիկների նկատմամբ կայունությունը նաև գյուղատնտեսության, սննդի անվտանգության խնդիր է, քանի որ անասնաբուծության, թռչնաբուծության, ձկնաբուծության ոլորտներում հակաբիոտիկները կիրառվում են ոչ միայն բուժական, այլև կանխարգելման նպատակներով: Արդյունքում, դեղակայուն մանրէները կարող են կենդանիներից անցնել մարդուն՝ սննդային շղթայի միջոցով:

Նշանակում է՝ միայն համատեղ և արդյունավետ միջգերատեսչական համագործակցությամբ է հնարավոր կսպել հակաբիոտիկների նկատմամբ կայունության վարգացումը:

ԱԱԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության
ԼՐԱՏՈՒ

«ՄԻԱՎ ՎԱՐԱԿ» ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ԱՎԱՐՏՎԵՑ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԼԸ

ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում ավարտվեց բուժաշխատողների կատարելագործման **«ՄԻԱՎ վարակ» դասընթացի** հերթական թեմատիկ փուլը:

Նոյեմբերի 20-ին ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում մեկնարկել էր **ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից բժիշկ-լաբորանտների համար կազմակերպված «ՄԻԱՎ վարակ» դասընթացի «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ» խորագրով եռօրյա թեմատիկ փուլը**:

Դասընթացին մասնակցում էին Երևանի և մարզերի բժշկական կազմակերպությունների բժիշկ-լաբորանտները:

Դասընթացներն անցկացվեցին դասախոսությունների, սեմինարների և գործնական պարապմունքների ձևով, իրականացվեցին խմբային քննարկումներ, ցուցադրվեցին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի վերաբերյալ տեսանյութեր:

Ունկնդիրներին առաջադրվեցին իրավիճակային խնդիրներ ՄԻԱՎ վարակի լաբորատոր ախտորոշման, խորհրդատվության և հետազոտության վերաբերյալ, անցկացվեցին ընդհանուր քննարկումներ:

Դասընթացի արդյունքում մասնակիցները ձեռք բերեցին կենսանյութի հետ անվտանգ աշխատանքի, տարբեր մեթոդներով ՄԻԱՎ վարակի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների իրականացման հմտություններ, որոնք կօգնեն ապահովել հետազոտությունների որակը, խուսափել մասնագիտական վարակումներից:

Մասնակիցներն ստացան գիտելիքներ, որոնք կօգնեն նրանց հետագա աշխատանքում կազմել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների թեստ-հավաքածուների տեխնիկական բնութագրեր, հետազոտությունների որակի ներլաբորատոր հսկողության գրաֆիկներ ու քարտեր, մշակել գործողությունների ստանդարտ ընթացակարգեր:

«ՄԻԱՎ վարակ» դասընթացն անցկացվում է ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ: Մասնակցությունն անվճար է, այն վավերացվում է համապատասխան վկայականով: Մասնակիցներին շնորհվում է ՇՄԶ 9 տեսական և 6 գործնական կրեդիտ:

ԱԱԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության
ԼՐԱՏՈՒ

Ջոշուա Աբրամս

Փորձի փոխանակում

Հանրային վայրերում ծխելու արգելքի հետ կապված քայլերը տնտեսության վրա նշանակալի բացասական ազդեցություն չեն թողնում: Եթե նման օրենքները որևէ լուրջ բացասական ազդեցություն ունենային տնտեսության վրա, ապա հարյուրից ավելի երկրներ չէին ընդունի դրանք, հատկապես, ծխից ազատ միջավայրերի առումով:

Այս մասին խոսել է Արևելյան Եվրոպայում և ԱՊՀ երկրներում **Campaign for Tobacco Free Kids** հասարակական կազմակերպության ծրագրերի տնօրեն **Ջոշուա Աբրամսը**, ով վերջերս Հայաստանում էր:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կան մի շարք միջոցառումներ, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ ծխողների թվի նվազման վրա և դրանք Հայաստանում ևս հնարավոր է կիրառել: Այդ միջոցառումներից մեկը, առաջին հերթին, 100 տոկոսով առանց ծխախոտի հանրային վայրերի ապահովումն է: Բոլորին է հայտնի, որ երկրորդային ծուխը նույնքան մահաբեր է, որքան առաջնայինը: Մյուսը ծխախոտի գովազդի, ծխախոտի օգտագործման խթանման և հովանավորության համապարփակ արգելքն է: Հաջորդը հարկման և գնային քաղաքականությունն է: Շատ արդյունավետ են նաև նախազգուշացումները, հանրային իրազեկման լայնածավալ քարոզարշավները, որպեսզի մարդիկ հասկանան, թե ինչ վնասներ և վտանգներ է պարունակում ծխելը: Եվ այս

ամենն իրականացնելու համար անհրաժեշտ են կարգավորող շրջանակներ:

Ջոշուա Աբրամսը մասնավորապես նշել է. *«Ավելի քան 100 երկիր Հայաստանում քննարկվող օրենսդրության նման օրենսդրություն են ընդունում, օրինակ, Վրաստանը, Մոլդովան, Ռուսաստանը, Ուկրաինան, Իռլանդիան: Միացյալ Նահանգներում ևս, որտեղից ես եմ, գործում են մի շարք օրենքներ և մենք հաջողությամբ կարողացել ենք նվազեցնել ծխողների թիվը: Ռուսաստանում ծխողների թիվը վերջին 10տարվա ընթացքում նվազել է 23 տոկոսով: Նման արդյունք է արձանագրվել նաև Ուկրաինայում: Ընդունվող այդ օրենքները մարդկանց պաշտպանում են ծխախոտի վնասներից, նկատվում է ծխախոտի օգտագործման նվազում, առանց տնտեսության համար որևէ վնասի: Ծխախոտը միակ օրինական սպառողական արտադրանքն է, որ սպանում է իր սպառողներից շատերին: Եթե հարցը օրենքով չկարգավորվի, ապա այդ բացը կօգտագործեն ծխախոտ արտադրողները»:*

Ջոշուա Աբրամսն անդրադարձել է նաև էլեկտրոնային սիգարետներին, ասելով, որ Հայաստանում IQOS-ների գովազդի համար չկա որևէ արգելք, որովհետև միայն սարքն է գովազդվում, որի հետևանքով ծխողների նոր բաղա է ստեղծվում և դրանք հիմնականում երիտասարդներն են: Ծխախոտ արտադրողները փնտրում են նոր ծխողների, ովքեր կգան լրացնելու հներին: Եվ դա անելու լավագույն միջոցը գովազդն է: Գովազդն արգելելու դեպքում ծխախոտ արտադրողների մի նոր սերունդ ծխախոտամոլ դարձնելու հնարավորությունները սահմանափակվում են: Եթե ծխելն արգելվում է հանրային վայրերում, պետք է արգելվեն նաև էլեկտրոնային սիգարետները: էլեկտրոնային սիգարետների ազդեցությունն առողջության վրա դեռ նոր է ի հայտ գալիս, այդ հարցը դեռևս կարգավորված չէ և բավականին լուրջ խնդիր է:

Այսպիսով, Ջոշուա Աբրամսը շեշտում է, որ ծխողների թիվը նվազեցնելու ամենաարդյունավետ եղանակը համապարփակ օրենսդրության ընդունումն ու կիրառումն է: Նրա խոսքերով, Նյու Յորքը լավագույն օրինակներից է: Այնտեղ ծխողների թիվը նվազել է ու չի գերազանցում 10 տոկոսը: Եվ դա եղել է շնորհիվ մի շարք միջոցառումների, որ Հայաստանի խորհրդարանում այժմ քննարկվում է՝ ծխից ազատ հասարակական վայրեր: Նյու Յորքում առկա է նաև արգելքը գովազդի որոշ տեսակների վրա, սահմանված են բարձր գներ ու հարկեր: Իսկ Ռուսաստանում, օրինակ, չի թույլատրվում ծխախոտը վաճառել կրպակներում:

«Իմ կարծիքով ամենաարդյունավետ միջոցը գնային և հարկային քաղաքականությունն է: Իսկ ապօրինի շրջանառությունը հնարավոր է կարգավորել վերահսկողական գործառույթներով և լավ կառավարումով, որոնք խիստ քաղաքականության մի մասն են: Ծխից ազատ հասարակական վայրեր ունենալը շատ կարևոր է, որովհետև այն ստեղծում է ընդհանուր մթնոլորտ, որտեղ մարդիկ սովորում են անծուխ տարածությանը և այն մտքին, որ ծխելն իրականում անհարմարություն է ստեղծում: Երբ մարդիկ ծխից ազատ միջավայրերի փորձ են ձեռք բերում, հետ գնալու ճանապարհ չկա:

Կարծում եմ, որ Հայաստանին կհաջողվի կյանքի կոչել այս օրենքները»,- ամփոփել է Ջոշուա Աբրամսը:

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան**, **Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**